ՊԱՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌԱԿԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՂ ՓՈՒԼԵՐՈՒՄ*

Նունե Մկրտչյան

Բանալի բառեր՝ մանկապատանեկան սպորտ, ֆիզիկական և հոգեկան առողջություն, մոտիվացիա, հետազոտություն ՀՀ-ում և ԼՂՀ-ում, մարզական կատարելագործում:

Անձի դրդապատճառային ոլորտը հոգեբանության բավականին լավ ուսումնասիրված ոլորտ է, սակայն, այսօր էլ շարունակում է մնալ գիտնականների հետաքրքրության դիտակետում: Ժամանակակից հոգեբանության մեջ կան բավականաչափ ուսումնասիրություններ, որոնք նվիրված են երեխաների և պատանիների դրդապատճառների ուսումնասիրությանը տարբեր տեսակի գործունեության, այդ թվում նաև մարզական գործունեության համատեքստում:

Բարձրագույն սպորտային ձեռքբերումների սպորտային մոտիվացիայի խնդիրներով զբաղվել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են՝ Ա. Յ. Պունին, Վ. Գոշեկը, Ն. Լ. Իլյինան, Ե. Ա. Կալինինը, Յու. Զ. Կրետտին, Ռ. Մ.Նայդիֆֆերը, Յու. Յու.Պալայման, Ռ. Ա. Փիլոյանը, Ա. Վ. Շաբոլտասը, Մ. Ն. Ֆիրսովը և այլոք:

Ուսումնասիրելով սպորտով զբաղվելու դրդապատճառների բնույթը՝ Յու. Զ. Կրետտին առանձնացրել է հետևյալ դրդապատճառները. ձգտում դեպի սթրես, կատարելություն, նյութական բարիքների ձեռքբերում: Դրանցում, ըստ էության, արտահայտված է երեխաների և դեռահասների որոշ մասի ձգտումը սպորտի միջոցով խթանելու սեփական զարգացումը, հասակակիցների մեջ արժանի տեղ գրավելը [1]: Յու. Յու. Պալայման մարզիկներին բաժանել է 2 խմբի, որոնցից մեկի մոտ առաջատար տեղ էին զբաղեցնում անձի ինքնադրսևորման դրդապատճառները՝ պայմանականորեն տալով նրանց անհատապաշտներ անունը, մինչդեռ երկրորդ խմբին՝ կոլեկտիվիստներ, որոնց մոտ գերակշռող էին սոցիալական, բարոյական խթանիչները, պարտքի զգացումը և կոլեկտիվի առջև պատասխանատվության զգացումը: [2]

Ոչ պակաս կարևոր են մանկապատանեկան սպորտում դրդապատճառների ձևավորման հարցերը: Մ. Ա. Յուֆերովի աշխատանքում հատուկ ընդգծվում է այն, որ ձեռքբերման մոտիվացիայի ուսումնասիրումը մեծ նշանակություն ունի նրա ակտիվ զարգացման ընթացքում՝ 9-11 տարեկանում: Գիտնականի կողմից հետազոտության ենթարկված տարիքում տեղի է ունենում կոնկրետ տիպի հաջողությունների և ան- հաջողությունների հանդեպ ատրիբուցիայի կիրառումը, սկսվում է անհաջողությունների և նրանց ծագման պատճառների համադրումը: Տվյալ հետազոտության մեջ որպես հետազոտության օբյեկտ ընտրվել են մայրերի, կրտսեր դպրոցական տարիքի երեխաների և դեռահասների ձեռքբերումների մոտիվացիան: Ուսումնասիրությունները մատնանշում են նաև, որ շատ երեխաներ և դեռահասներ սկսում են սպորտով զբաղվել ոչ այնքան այդ գործունեության հանդեպ հետաքրքրությունից կամ որոշակի արդյունքնե-

* Հոդվածն ընդունվել է 25.01.2016:
Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.դ., պրոֆեսոր՝ Հ.Մ.Ավանեսյանը:

րի հասնելու ձգտումից դրդված, այլ իրենց հասակակիցների հետ միասին լինելու, նրանց հետ հարաբերվելու և համագործակցելու ցանկության պատճառով[3]:

Առկա հետազոտությունների արդյունքների ընդհանրացումը հնարավորություն տվեցին եզրահանգելու, որ մայրական դաստիարակությունը միջնորդավորված ազդեցություն ունի երեխայի ձեռքբերման դրդապատճառների վրա: Այն արտահայտվում է ընտանեկան դաստիարակության և ձեռքբերման դրդապատճառների չափանիշների միջև եղած զգալի դրական և բացասական կապերի մեջ: Տղաների համար հատկանշական է արգելքների և պատժի չափի հետ սեփական անկարողության զգացման դրական նշանակալի կապը: Արգելքների ավելացման հետ մեկտեղ աճում է սեփական անկարողության զգացումը: Աղջիկների համար հատկանշական է զգալի փոխադարձ կապը մոր կողմից երեխայի կարիքների բավարարման չափի հետ [4]:

Վ.Վ. Յաստրեբովը մշակել է մանկավարժական գործընթացի մոդել, որն ուղղված է ձեռքբերման մոտիվացիայի ձևավորման հաջողությունը պայմանավորող գործոնների և պայմանների առանձնահատկությունների ուսումնասիրմանը: Գլխավոր նպատակը, որն իր առջև դրել էր հեղինակը, պայմանավորված էր դեռահասների մոտ ձեռքբերման մոտիվացիայի ձևավորմանը և հաջողության իրավիճակի կարողության մանկավարժական բացահայտմամբ: Ընդ որում կարողություն հասկացության տակ նկատի է առնվում ուժերի մի համակարգ, որի գործողությունը ակտուալ է կամ կարող է ակտուալացվել որոշակի պայմանների առկայության դեպքում [5]:

Ձեռքբերման մոտիվացիայի կապը կամային և անձնական հատկությունների հետ կարելի է տեսնել Ի.Ի.Բոյկոյի աշխատանքում, որտեղ ներկայացված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են այն մասին, որ ձեռքբերումների մոտիվացիայի կառուցվածքում անհրաժեշտ է առանձնացնել ոչ միայն դրա բոլոր բաղադրիչները, այլև ընդգծել յուրաքանչյուր առանձին բաղադրիչի նշանակությունը և նրանց միջև գոյություն ունեցող կապը, «հաջողակ» և «անհաջողակ» դեռահասների մոտ: Չնայած այն փաստին, որ Բոյկոյի վարկածը փորձարարական ճանապարհով ստացավ իր հաստատումը՝ միաժամանակ այն նաև առաջ բերեց մի շարք նորանոր հարցեր (կրթական և սպորտային մոտիվացիայի փոխկապակցվածության, ձեռքբերումների մոտիվացիայի մեջ գենդերային տարբերության վերաբերյալ և այլն), որոնք կարող են դառնալ նոր հետազոտության առարկա [6]:

Շատ հոգեբանների աշխատություններում սպորտային գործունեության մոտիվացիայի թեմայով լայնորեն ներկայացված են ախտորոշումը, սկսնակների և բարձրակարգ մարզիկների մարզական մոտիվացիայի ամրապնդման հարցերը: Սպորտում շատ կարևոր է ճիշտ բաշխել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական ծանրաբեռնվածությունը, որովհետև գերծանրաբեռնվածությունը կարող է հանգեցնել հուզական այրման, ինչը առկա է ոչ միայն սկսնակ, այլև գործող պրոֆեսիոնալ մարզիկների մոտ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ընդգծել ամբողջ մարզային պրոցեսի ընթացքում հուզական վիճակի փոփոխման նկատմամբ վերահսկողության կարևորությունը: Ժամանակակից սպորտի զարգացման տենդենցը կանխորոշում է բարձր որակի սպորտային ռեզերվի պատրաստման երկարաժամկետ ծրագրերի մշակումը: Այսպես՝ Ա. Ց. Պունին ներկայացրել է սպորտային գործունեության դրդապատճառների փուլային զարգացումը՝ բաժանելով այն հետևյալ մասերի՝ նախնական, մասնագիտական ընտրության և սպորտային վարպետության փուլեր [7]:

Մոտիվացիայի զարգացման մեջ նմանատիպ փուլերի առանձնացումը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ դրանց ազդեցությունն ու նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ, որտեղ առաջատար է դառնում ձեռքբերման մոտիվացիան,

իսկ նպատակների իրականացումը կարող է դառնալ բավականին ուժեղ խթան մարդու կյանքում: Որոշիչ դեր են խաղում երիտասարդ մարզիկների համար մշակված ծրագրերը, որոնք հիմնված են մարզման «փուլայնացում» կոչվող սկզբունքի վրա:

Հայազգի գիտնականներից սպորտային մոտիվացիայի հարցով զբաղվել են Ա. Ա. Լալայանը, Ա.Ա.Բաբայանը, Հ.Մ.Ավետիսյանը, որոնք ի թիվս այլ գիտնականների, ուսումնասիրել են բարձր որակավորում ունեցող մարզիկների: Վերջիններիս հոգեբանական պատրաստվածության վերաբերյալ հարցն առաջին անգամ դրվել է Ա. Ա. Լալայանի կողմից սպորտի հոգեբանության Առաջին Միութենական խորհրդակցության ժամանակ: Նրա կողմից մշակվել է մի համալիր ծրագիր, որի վրա աշխատանքի մեջ են ներգրավվել Հայաստանի առաջատար մասնագետները (Ա. Օ. Կոստանյան, Վ. Քարամյան, Ս.Պ.Չատաբալշյան, Ա.Բ.Արարատյան, Ա.Ա.Բաբայան, Գ.Մ.Ավետիսյան, Մ.Պ. Մկրտումյան, Ա.Վ.Ստեփանյան և այլոք), որոնց շնորհիվ սպորտի հոգեբանությունը տեսական առարկայից վերածվել է կիրառական ոլորտի:

Հայաստանում սպորտի զարգացման գործում գործնական աջակցություն ունեցան մարզչի, ֆիզկուլտուրայի ուսուցչի սպորտային գործունեության, հոգեբանական ինքնակարգավորման և հոգեբանական ախտորոշման ուսումնասիրումը: Այսպես, Հ. Մ. Ավանեսյանը, Մ.Պ.Մկրտումյանը և Լ.Ս.Բադալյանը, աշխատանք տանելով մենամարտի ընտրանու հետ, ադապտացրել են հոգեբանական ախտորոշման մեթոդները, արդիականացրել են ինքնակարգավորման մեթոդները նախամեկնարկի փուլում և առաջարկել ինքնաներշնչման բանաձևի կրճատ տարբերակ:

Իր հետազոտության մեջ Ա.Ա.Հարությունյանը ուսումնասիրել է այսօր կիրառվող հոգեբանական ինքնակարգավորման մեթոդների ազդեցությունը բարձր որակավորման մարզիկի օրգանիզմի վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սպորտաձևը, ազդեցության ժամանակահատվածը (փուլերը), այնպիսի օրգանների և համակարգերի ֆունկցիոնալ գործունեության փոփոխությունները, որոնք առավել ակտիվ կերպով են արձագանքում վերբալ հոգեբանական ինքնակարգավորման ազդեցությանը: Հետազոտության ընթացքում ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ մրցումային արտակարգ պայմաններում մարզիկի վարքի կանխատեսման համար, ինչը գործնականում արտահայտվում է մարզիկի մրցակցային գործունեության կոնկրետ արդյունքների բարելավմամբ [8]: Ա.Գ.Ստեփանյանի ուսումնասիրման օբյեկտ են հանդիսացել անձի հոգեբանական առանձնահատկությունների փոփոխությունները, որոնք ընթանում են կոնկրետ սպորտաձևում կատարելագործման գործընթացի հետ միաժամանակ, իսկ հետազոտության ընթացքում ստացված արդյունքները թույլ են տալիս դիտարկել մարդու անձնական որակները անձին ներկայացված իրավիճակին գործառնական համապատասխանության տեսանկյունից [9]:

Ժամանակակից մեծ մրցումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ սպորտը վերափոխվել է պրոֆեսիոնալ գործունեության: Սպորտն այսօր և՛ քաղաքականություն է, և՛ բիզնես, ինչը հանգեցրել է նրան, որ մրցակցությունը սպորտում դառնա նաև մարզային գործունեության նկատմամբ գիտական բարձր տեխնոլոգիական մոտեցումների մրցակցություն: Իր հետազոտության մեջ Ս. Վ. Հովհաննիսյանը կանգ է առնում փուլային սպորտաձևերի մարզային պարապմունքների մոդելավորման պրոցեսի նկատմամբ նոր մոտեցումների ձևակերպման հիմնավորման և նախապատրաստական պրոցեսի անձնավորման չափանիշների համակարգայնացման վրա, հեծանվասպորտում հեղինակի կողմից մշակված մարզման սարքը ներդնելով: Այն թույլ է կտա նպատակաուղղված կառավարել ոչ միայն ֆիզիկական ծանրաբեռնվածությունը տվյալ սպորտաձևում, այլև նմանատիպ փուլային սպորտաձևերում [10]:

Նշված մեծաքանակ հետազոտությունները, սակայն, չեն անդրադառնում մեզանում մեծ կարևորություն ներկայացնող այնպիսի խնդրին, ինչպիսին է երկրի քաղաքական և իրավական կարգավիճակի ներգործությունը մարզիկների դրդապատճառային համակարգի վրա: Մեր նպատակն էր՝ ուսումնասիրել և կատարել Հայաստանում և ԼՂՀ-ում բնակվող դպրոցականների դրդապատճառային ուղղվածության առանձնահատ-կությունների համեմատական վերլուծություն կախված՝ սպորտային գործունեության մեջ ներգրավվածությունից, ինչի նպատակն է դրդապատճառային ուղղվածության ձևավորմանը նպաստող կամ խանգարող սոցիալական և տնտեսական գործոնների ազդեցության բացահայտումը:

Հետազոտությունը իրականացվել է երեք տարիների ընթացքում (2012-2015թթ.) ընկած ժամանակաշրջանում: Հետազոտությունում մասնակցություն են ունեցել դպրոցական հասակ ունեցող 9-11 տարեկան 260 երեխա (ՀՀ-ում ապրող 105 և ԼՂՀ-ում ապրող 105 երեխա, ինչպես նաև ստուգիչ խումբ՝ 50 մարդ): Ընտրանքի տարիքային նախընտրությունը պայմանավորված է սպորտային կատարելագործման հասնելու տարիքի չափորոշիչներով: Փորձագիտական հարցման մեջ մասնակցություն են ունեցել փորձագետ-մարզիչներ, ովքեր ունեն 10 և ավելի տարվա փորձ՝ ընդհանուր 15 մարդ: Վիճակագրական վերլուծության արդյունքում բացահայտվեց տղաների և աղջիկների թեստային ցուցանիշների համեմատական հարաբերությունը (տես՝ աղյուսակ 1):

Աղյուսակ 1.
Տղաների և աղջիկների թեստային արդյունքների համեմատական աղյուսակ (Ստյուդենտի t գործակից)

Թեստի ցուցանիշ	*Աղջիկներ (9-11տ.)*	*Տղաներ (9-11 տ.)*	*Հավաստիության աստիճան*
ՀՀ	*M = 62*	*M =49*	*P≤ 0,001*
ԱԿ 1	*M =40*	*M =41*	*-*
ԱԿ 2	*M =39*	*M =49*	*P≤0,05*

Ծանուցում՝ ՀՀ – հաջողության հասնելու հույս, ԱԿ 1 – անհաջողության վախ անձնական անընդունակության բնույթի, ԱԿ 2 – անհաջողության վախ սոցիալական բնույթի:

Հաջորդ փուլում ամփոփվեցին փորձագիտական գնահատման արդյունքները, որոնց միջոցով արձանագրվեց մանկապատանեական սպորտում ներգրարված մարզիկների արժեքա-դրդապատճառային համակարգի որոշ առանձնահատկություններ:

Հետազոտության արդյունքների ամփոփումը հանգեցրեց մի շարք հիմնական եզրակացությունների:

- *Դրդապատճառը, համարվելով սպորտային հմտությունների սերտման և ցուցադրման հիմնական փոփոխականը, հանդես է գալիս որպես ֆիզիկական կատարելության ինքնահիրականացման միջոցներից մեկը, ինչպես նաև՝ գործառութային զարգացման և անհատական, պրոֆեսիոնալ որակների կարևոր միջոց: Մարզիկի դրդապատճառը, նրա աստիճանավորումը, շարժընթացը և ուղղվածությունը կարող են պայմանավորված լինել գնահատողական չափորոշիչներով, որոնց մեջ առանձնացվում են այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են՝ այն երկրի քաղաքական և իրավական կարգավիճակը, որը նա ներկայացնում է:*

- *Մանկական-երիտասարդական սպորտում դրդապատճառն ունի տարիքային շարժընթաց, ինչը նախորոշում է նրա ուղղվածությունը և սպորտային գործունեության հոգեբանական բովանդակությունը: Այն արտահայտվում է նպատակային ակտիվության կարգավորման համատեքստում, որի գործընթացում անձը ձեռք է բերում տարբեր միջոցներ ցանկալի արդյունքների հասնելու համար:*
- *Մանկական-երիտասարդական սպորտում դրդապատճառն առավել արդյունավետ է (հոգեբանական տեսանկյունից), եթե այն ձևավորվում է ոչ միայն սպորտ դպրոցի, խմբի կամ ակումբի համբավով, այլև անպայման երկրի և ազգային բնութագրի շնորհիվ: Անձի դրդապատճառային ոլորտի ձևավորման և զարգացման գործընթացն ունի դինամիկ բնույթ, որն անհրաժեշտ է ժամանակին բացահայտել հոգեբանա-մանկավարժական մեթոդների առավել նպատակային կարգավորման համար:*

Այսպիսով՝ ստացվել են երիտասարդ մարզիկների անձնային ուղղվածության փոփոխությունների ձևավորման և ինքնահիրացման հոգեբանական առանձնահատկությունների պատկերը ուսումնամարզական կատարելագործման վաղ փուլերում: Վերլուծության արդյունքում դուրս են բերվել մարզական գործունեության մեջ ներգրավված և չներգրավված, ինչպես նաև՝ տարբեր պայմաններում սպորտով զբաղվող (ՀՀ-ում և ԼՂՀ-ում) երեխաների և դեռահասների տարիքային շարժընթացի և դրդապատճառների կառուցվածքավորման համեմատականները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Кретти Б. Дж. Психология в современном спорте. М., Ф и С., 1978, стр.275
2. Палайма Ю.Ю. Опыт исследования относительной силы мотива и формировании е соревновательной установки у спортсменов / Психология современный спорт. М., Ф и С, 1973, стр. 86-99.
3. Юферова М. А. Влияние семейного воспитания на развитие мотивации достижения детей 9-11 лет. Дисс. на соискание уч. степ. канд. псих. наук по спец. 19.00.07, Ярославль, 2004. стр.146
4. Хекхаузен Х. Мотивация и деятельность. Т. II. М., 1986. стр. 270–339.
5. Ястребов В.В. Ситуация успеха как средство формирования мотивации достижения у подростков. Дис. канд. пед. наук, Волгоград , 2004, стр. 208
6. Бойко И.И. Мотивация достижения у подростков-спортсменов и ее развитие в процессе проведения коррекционно-тренинговых занятий Дис. канд. психол. наук, 2006 Иркутск, стр.161.
7. Пуни А.Ц. Психологическая подготовка к соревнованиям в спорте. М.,1969, стр.176.
8. Հարությունյան Ա.Ա., Հոգեկարգավորման գործընթացում մարզիկների հոգեֆիզիոլոգիական կայունության ուսումնասիրությունը, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2003, էջ 28:
9. Ստեփանյան Ա.Գ. Մարզիկի անձնային որակների համեմատական վերլուծությունը գործունեության յուրահատուկ պայմաններում, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2006, էջ 21:
10. Հովհաննիսյան Ս.Վ., Մոդելավորող մարզումների համակարգի անհատականացումը հեծանվային սպորտում, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2004, էջ 25:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պատանի մարզիկների դրդապատճառվածության առանձնահատկությունները ուսումնամարզական կատարելագործման վաղ փուլերում

Նունե Մկրտչյան

Սույն հոդվածը նվիրված է ԼՂՀ երիտասարդ մարզիկների դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունների ուսումնասիրմանը՝ սպորտով զբաղվելու դրդապատճառների ձևավորման և աստիճանավորման վրա սեռատարիքային և սոցիալ-քաղաքական գործոնների ազդեցության համատեքստում: ԼՂՀ սպորտով զբաղվող երեխաների և դեռահասների դրդապատճառների ուսումնասիրությունը և ստացված տվյալների համեմատումը ՀՀ-ում ձեռք բերված արդյունքների համեմատական վերլուծությունն ունի հատուկ նշանակություն ինչպես մանկապատանեկան սպորտի զարգացման, այնպես էլ հատուկ քաղաքական կարգավիճակ ունեցող երկրի հոգեբանական խնդրի ընդհանուր տեսական մշակման համար:

РЕЗЮМЕ

Особенности мотивационной направленности на ранних стадиях учебно-тренировочного совершенствования

Нунэ Мкртчян

Ключевые слова: *детско-юношеский спорт, физическое и психическое здоровье, мотивация, исследование в РА и в НКР, спортивное совершенствование.*

Статья посвящена исследованию особенностей мотивационной сферы юных спортсменов НКР в контексте влияния половозрастных и социально-политических факторов на формирование и иерархию мотивов занятия спортом. Исследование мотивации занятия спортом детей и подростков НКР и сравнение полученных данных с результатами, полученными в РА, имеет особую значимость как для развития детско-юношеского спорта, так и для общетеоретической разработки психологических механизмов и закономерностей спортивной мотивации для страны с особым политическим статусом.

SUMMARY

Features in Motivation Sphere of Young Sportsmen on the early Stages of Sport Perfectionism

Nune Mkrtchyan

Keywords: *youth sport, physical and mental health, motivation, investigation in RA and NKR, sports perfection.*

This article considers the motivation sphere of the NKR young sportsmen in the context of age-gender correlations as well as socio-political factors, forming the hierarchy of motives and sports. After the analysis of children's and teenagers' motivation for going in for sport in the NKR and in the RA, we can conclude that this investigation has special significance for children and junior sport development as well as for the improvement of the general-theoretical and psychological mechanisms and motivating regularities for countries with special political status.